ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունվարի 2021 թ. N 6-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ «2021» ԹՎԱԳՐՄԱՄԲ ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԸ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ակցիզային հարկի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է***.

1. 2021 թվականի հունվարի 15-ից կիրառության մեջ դնել Արցախի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ծխախոտի արտադրանքի դրոշմավորման համար «2021» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**